Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 1 (364) 1-31 հունվար, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Պառակտման հետեւանքով իրավունք չունենք կորցնելու ձեռքբերածը

Մեր մեջ կարող են տարաձայնություններ ու կարծիքների տարբերություններ լինել, բայց, անկախ դրանից, բոլորս էլ դաշնակցական ենք:

Մի երրորդ ուժ փորձում է կուսակցությանը՝ հույս ունենալով, որ կլինեն միամիտներ, ովքեր զոհը կդառնան ու անհարմար վիճակի մեջ կհայտնվեն: Մենք խնդիր չունենք, խնդիր ունեն հավանաբար մարդիկ, որ հայտարարություն են արել, որոնց համար ձեռնտու է կեղծ իրավիճակներ ստեղծել: Երբ չեն հաջողում, փորձում են այդ ձեւերով խաբեության մթնոլորտ ստեղծել:

ՀՅԴ 32-րդ Ընդհանուր ժողովի ընթացքում քննարկվեցին մեր ձեռքբերումներն ու կորուստները: Կա մեկ ընդհանուր եզրակացություն՝ մենք հայկական իրականության մեջ գործող դրական, պատասխանատու քաղաքական ուժն ենք: Սա ամենամեծ գնահատականն է, որ մենք կարող ենք մեզ տալ եւ որը, կարծում եմ, նաեւ ուրիշները հանգիստ խղճով կտան: Մենք եղել ենք խոսակիցը, գործակիցը թե ընդդիմության, թե իշխանության, բայց մենք մեր սկզբունքները չենք զիջել, մեր սկզբունքներից չենք հրաժարվել. որտեղ անհրաժեշտ է եղել՝ ընդդիմության հետ ենք աշխատել, իսկ երբ եղել է պետական հարց, երկրի անվտանգության հարց՝ չենք խուսափել իշխանության հետ համագործակցելուց: Մենք, սակայն, չենք համագործակցել իշխանության գոյությունը երկարաձգելու համար: Մենք համագործակցել ենք, որպեսզի Ղարաբաղի հարցում ունենանք հաջողություն, որպեսզի հայ-թուրքական հարաբերություններում ունենանք հաջողություն: Եղել ենք նաեւ ընդդիմադիր, իրական ընդդիմադիր, ստեղծել ենք նպաստավոր պայմաններ՝ ընդդիմությունն ազդու դարձնելու համար:

Վերջին դեպքերը ցույց են տալիս, որ սկսվել է մաշող պատերազմ: Սահմանն այս երկրին է պատկանում, սահմանին տեղի ունեցող ամեն բան պետք է հետաքրքրի բոլորիս: Ես զարմանում եմ՝ ի՞նչ պետք է լինի, որ մենք կարողանանք միասնական լինել: Այն, որ այս իշխանությունները թերություններ ունեն, անշուշտ, ճիշտ է: Ճիշտ է, որ նրանք կարող են ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել, հոգատար վերաբերմունք ցուցաբերել ժողովրդի հանդեպ: Թե՛ ժողովրդավարության, թե՛ սոցիալական արդարության առումով ունեն հստակ անելիքներ եւ պետք է անեն: Այդ առումով մենք պետք է պահանջատեր լինենք, բայց դա չի կարող պատճառ հանդիսանալ, որ մենք արտաքին վտանգի նկատմամբ միասնականություն ցույց չտանք:

Փաստ է՝ թե՛ ընդիմությունն է փնտրում Դաշնակցության համագործակցությունը, թե՛ իշխանությունը: Սա նշանակում է, որ գիտեն՝ մենք մաքուր ուժ ենք, սկզբունքային ուժ ենք, հետին նպատակներով խաղացող ուժ չենք: Որքան էլ ուզում են մեզ քննադատեն, բայց երբ միաժամանակ ասում են՝ եկեք համագործակցենք, նշանակում է՝ մեզ հավատում են, գիտեն, որ Դաշնակցությունը զորավոր ուժ է: Մեզ մոտ, հաճախ ինձ թվում է, որ արտաքին վտանգը առիթ ու հնարավորություն է ներքին հարցերը արծարծելու, որն անընդունելի եմ համարում: Մենք պիտի աշխարհին ապացուցենք, որ եթե պատերազմ եղավ, ամբողջ հայությունը մեկ բռունցք է դառնալու, չենք թողնելու ոչ ոք իր կամքը պարտադրի մեզ: Սա ամենակարեւոր հարցն է. ոչ մի հարց սրան հավասարվել չի կարող: Այն, ինչ 25 տարի առաջ ձեռք ենք բերել պայքարի արդյունքում, այսօր իրավունք չունենք կորցնելու ներքին պառակտման, ներքին ինքնանպատակ պայքարների պատճառով:

(հատված «Երկիր մեդիա» հեռուստատեսության «Երկրի հարցը» ծրագրի՝ Հրանտ Մարգարյանի ելույթից)



ՀՅԴ 32-րդ ընդհանուր ժողովն ավարտեց իր աշխատանքները, ընտրեց նոր Բյուրո

ԵՐԵՎԱՆ (ՀՅԴ Մամլո Դիվան, 24 Հունվար 2015) - Հայ Յեղափոխական Դաշնակցության 32-րդ Ընդհանուր ժողովը գումարվեց Դիլիջանում՝ 16-24 Հունվարի 2015 թվականի:

ՀՅԴ Բյուրոյի հրավերով գումարված ժողովին մասնակցեցին կուսակցության կազմակերպական շրջանների պատգամավորներ եւ խորհրդակցական ձայնով հրավիրյալներ:

Ժողովը նախ լսեց, քննարկեց եւ արժեւորեց կուսակցության անցած հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը, ձեռքբերումներն ու թերացումները, ապա լրամշակման ենթարկեց առաջիկա քառամյակի համար ՀՅԴ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարությունը, արտաքին եւ ներազգային ճակատներում կուսակցության գործունեությունն ու դիրքորոշումները՝ իր համահայկական եւ հայաստանակենտրոն աշխարհայացքի հիման վրա:

Իր աշխատանքների ավարտին՝ ՀՅԴ 32-րդ Ընդհանուր ժողովն ընտրեց նոր Բյուրո՝ հետեւյալ կազմով.

Վիգեն Բաղումյան (Իրան)
Վիգեն Յակուբյան (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Հակոբ Խաչերյան (Լիբանան)
Հրանտ Մարգարյան (Հայաստան)
Կիրո Մանոյան (Հայաստան)
Խաչիկ Մուրադյան (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)
Բենիամին Պչաքչյան (Լիբանան)
Հակոբ Տեր Խաչատուրյան (Կանադա)
Արմեն Ռուստամյան (Հայաստան)
Սպարտակ Սեյրանյան (Հայաստան)
Մուրադ Փափազյան (Ֆրանսիա)

ՀՅԴ Բյուրոն իր առաջին նիստին Բյուրոյի ներկայացուցիչ ընտրեց Հրանտ Մարգարյանին, իսկ քաղաքական ներկայացուցիչ՝ Արմեն Ռուստամյանին:

Հունվարի 28-ին տեղի ունեցավ ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի հերթական նիստը:

Նիստում ՀՅԴ Հայաստանի Գերագույն Մարմնի ներկայացուցիչ ընտրվեց Աղվան Վարդանյանը:

Հիշեցնենք, որ նախկինում, մինչ ՀՅԴ Բյուրոյի անդամ ընտրվելը, ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչը Արմեն Ռուստամյանն էր:

ՀՅԴ 32-րդ ընդհանուր ժողովի հայտարարությունը

Հայ Յեղափոխական Դաշնակցության 32-րդ Ընդհանուր ժողովը գումարվեց 2015 թվականի հունվարի 16-24-ին՝ Դիլիջանում: Ժողովին մասնակցեցին կուսակցության կազմակերպական շրջանների պատգամավորներ եւ խորհրդակցական ձայնով հրավիրյալներ: Ժողովը քննարկեց եւ արժեւորեց կուսակցության անցնող հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը, ձեռքբերումներն ու բացթողումները, ապա լրամշակման ենթարկեց առաջիկա քառամյակի համար ՀՅԴ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարությունը...

Կարդացեք 2-րդ էջում

Մինսկի խումբը կոչ է արել Ադրբեջանին՝ հավատարիմ մնալ հակամարտության խաղաղ կարգավորմանը

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ դեսպան Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) եւ Պիեռ Անդրուն (Ֆրանսիա) Կրակովում հանդիպում են ունեցել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ: Ներկա է եղել նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկը: Համանախագահները հանդիպումից հետո հայտարարություն են տարածել, որում մասնավորապես ասված է.

«Մենք Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովին...

Կարդացեք 3-րդ էջում

ՀՅԴ 32-րդ ընդհանուր ժողովի հայտարարությունը

Հայ Յեղափոխական Դաշնակցության 32-րդ Ընդհանուր ժողովը գումարվեց 2015 թվականի հունվարի 16-24-ին՝ Դիլիջանում: Ժողովին մասնակցեցին կուսակցության կազմակերպական շրջանների պատգամավորներ եւ խորհրդակցական ձայնով հրավիրյալներ: Ժողովը քննարկեց եւ արժեւորեց կուսակցության անցնող հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը, ձեռքբերումներն ու բացթողումները, ապա լրամշակման ենթարկեց առաջիկա քառամյակի համար ՀՅԴ քաղաքական ուղեգիծն ու ռազմավարությունը, արտաքին եւ ներազգային ճակատներում գործունեությունն ու դիրքորոշումները՝ իր համահայկական եւ հայաստանակենտրոն աշխարհայացքի հիման վրա: Ժողովն արձանագրեց, որ՝

ա) Հայաստանն ու հայությունը դիմագրավում են լուրջ մարտահրավերների՝ Հայաստանի եւ Արցախի Անկախ Հանրապետություններն ամրապնդելու, արդյունավետ կառավարում ապահովելու, համահավաք ուժերով գործելու, մեր ժողովրդի ինքնադրսեւորման համար բարենպաստ, ազատ պայմաններ երաշխավորելու առումով:

բ) Հայաստանի քաղաքական համակարգի անկատարությունը, ժողովրդավարության արմատավորման դժվարությունները, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը, անարդարությունները խարխլում են հայ հասարակության վստահությունը սեփական պետության հանդեպ: Մեծ չափերի հասնող գործազրկությունն ու աղքատությունը, արտագաղթը պարտադրում են վարվող տնտեսական քաղաքականության արմատական փոփոխություն:

գ) Հայաստանի ներքաղաքական հիմնական հարցերն են՝ իշխանություն-ընդդիմություն միասնական քաղաքական համակարգի կայացումը, բիզնեսի եւ քաղաքականության իրական տարանջատումը, ժողովրդի ազատ կամարտահայտությամբ նոր որակի իշխանության ձեւավորումը, ընկերային արդարության հաստատումը, քաղաքացիների իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

դ) Հարավային Կովկասում եւ ընդհանրապես տարածաշրջանում սաստկացել է մեծապետական ուժերի մրցապայքարը՝ ազդեցության գոտիների ընդլայնման կամ ամրապնդման նպատակով:

ե) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը Հայաստանին կանգնեցրել է ռազմավարական նոր մարտահրավերների առջեւ:

զ) Ադրբեջանը նոր թափ է հաղորդել իր ռազմապաշտ քաղաքականությանը՝ զինադադարի գրեթե ամենօրյա խախտումներ կատարելով եւ լայն ծավալի առճակատման վտանգ ստեղծելով:

է) Թուրքիան կիրարկում է ագրեսիվ քաղաքականություն՝ իր երբեմնի կայսերապետական դիրքերը վերականգնելու նպատակով, որի թիրախներից են հայրենամերձ գոտիների հայկական գաղութների կազմալուծումն ու ֆիզիկական վտանգի ենթարկելը:

Ընդհանուր ժողովը որոշեց, որ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը հետամուտ պետք է լինի՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի արմատական փոփոխությանը՝ սահմանադրական բարեփոխումների ճանապարհով եւ ընկերային արդարության հաստատումով:

բ) Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման եւ Արցախի Հանրապետության անկախության ճանաչման ջանքերը շարունակելով՝ հայության ուժերի մեկտեղման միջոցով դիմակայել հայրենիքի անվտանգությանը սպառնացող վտանգներին:

գ) Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը նկատելով որպես Հայ Դատի պայքարի վերանորոգման հանգրվան՝ Հայ Դատի ռազմավարական նպատակ նկատել Թուրքիայից հողային պահանջատիրությունը, Հայոց ցեղասպանության ճանաչումն ու հատուցումը հետապնդել համազգային համակարգված ծրագրով:

դ) Պաշտպանել Ջավախքի հայության իրավունքները, Ջավախքի հայկական ինքնության պահպանումը համարել հայ-վրացական հարաբերությունների սերտացման գրավական:

ե) Ամբողջական զորակցություն եւ հետեւողական օժանդակություն ցուցաբերել սիրիահայության ինքնապահպանման պայքարին՝ քաղաքական, նյութական եւ բարոյական բոլոր ուղղություններով:

զ) Համախմբել Սփյուռքի ուժերը՝ ի խնդիր հայկական գաղթօջախների կենսունակության եւ հայրենիք-սփյուռք համագործակցության ընդլայնման: Հայ Յեղափոխական Դաշնակցությունն իր ամբողջական զորակցությունն է հայտնում Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների անկախության գլխավոր երաշխավոր Հայոց բանակին, զինված ուժերի ողջ անձնակազմին, որոնք օրինիբուն, հակառակ բոլոր վտանգների, պաշտպանում են Հայրենիքի անվտանգությունն ու մեր ժողովրդի անդորրն ու խաղաղությունը:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը իր 125-ամյակի առիթով վերանորոգում է հանձնառությունը՝ բոլոր ուժերով նվիրվելու Հայաստանի ու հայության առջեւ ծառացած խնդիրների լուծմանը, տարածաշրջանում ազդեցիկ գործոն դառնալու, մեր ազգային արժանապատվությունը պահպանելու, ինքնիշխանությունն ամրապնդելու եւ համահայկական ներուժի ամբողջական կազմակերպումն ու հզորացումն իրականացնելու համար:

ՀՅԴ 32-րդ Ընդհանուր ժողով
24 հունվար 2015

ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների հետ աշխատում ենք հանուն մեկ նպատակի, հանուն մեկ գաղափարի. ԼՂՀ ԱԳ նախարար

Այսօր ԼՂՀ արտաքին գործերի նախարարի տարեկան հաշվետու ասուլիսի ժամանակ նախարարը պատասխանել է նաեւ լրագրողներին հուզող հարցերին: ԼՂՀ արտաքին գործերի նախարարը կարեւորել է Արցախի միջազգային ճանաչման գործընթացում ՀՅ Դաշնակցության Հայ Դատի գրասենյակների հետեւողական աշխատանքները եւ նշել. «Մեր ցանկացած հաղթանակ դրսում հնարավոր չի լինի առանց



սփյուռքյան կառույցների օժանդակության:

Մենք համագործակցում ենք Հայ Դատի գրասենյակների հետ, ունենում ենք հանդիպումներ, համակարգում մեր աշխատանքները: Մտադիր ենք շարունակել մեր համագործակցությունը, քանի որ մենք աշխատում ենք հանուն մեկ նպատակի, հանուն մեկ գաղափարի»:

«ԱՊԱՌԱԺ»

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ուղերձը Հայոց բանակի օրվա կապակցությամբ

1992թ. հունվարի 28-ին՝ ուղիղ քսաներեք տարի առաջ, պատմական որոշումով ազդարարվեց հայոց ազգային բանակի ստեղծումը: Հայոց բանակն ու հայոց պետականությունն իրենց կայացման ճանապարհին դժվար փորձություններ անցան, լրջագույն մարտահրավերներ դիմագրավեցին եւ շարունակում են դիմագրավել:

Հայոց բանակի 23-րդ տարեդարձն է այսօր: Ու, չնայած իր «երիտասարդ» տարիքին, հայկական բանակը մարտունակ է, ուժեղ ու կայացած. իրավամբ, այն մեր անկախության ամենամեծ նվաճումն է ու երաշխավորը: Բանակ, որ հայրենիքի անկախության ու ազատության համար սեփական որդիների թափած թանկ արյամբ է զորավոր, բանակ, որ հաղթանակ ու խաղաղություն է պարգեւում մեզ, բանակ, որ սնում է մեր արժանապատիվ գոյությունը, կերտում հայրենիք ու պետականություն:

Շնորհավոր տոնդ, հայ զինվոր, դու սահման ես պահում, նույնն է թե՝ հայրենիք կամ սեփական օջախ: Քո նվիրումով, արիությամբ ու անձնազոհությամբ է նվաճվում խաղաղության մեր յուրաքանչյուր օրը, քո կամքով են կոփվում մեր երկրի հաղթանակները, ազատ ու միացյալ հայրենիքի տեսլականը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմինը շնորհավորում է ողջ հայ ժողովրդին նվիրական այս տոնի կապակցությամբ՝ համոզումով, որ մեր հավաքական սերն ու երախտագիտությունը վայելող հայոց բանակը կշարունակի լինել հայրենիքի անվտանգության, մեր ժողովրդի անդորրի ու անխոցելի սահմանի պահապանը:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմին

Վերադարձիդ հավատալով



Հունվարի 28-ին լրացավ արդարության մարտիկ Համբիկ Սասունյանի բանտարկության 33-րդ տարին: Հայ Դատի նվիրյալ, «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ» բանակի զինվոր Համբիկ Սասունյանը ծնվել է 1963 թվականի հունվարի 1-ին, Բեյրութում եւ մեծացել Բուրջ Համուդ հայկական թաղամասում: 1982 թվականի հունվարի 28-ին 19-ամյա Համբիկը, ահաբեկելով ԱՄՆ-ում Թուրքիայի ընդհանուր հյուպատոս Քեմալ Արըքանին, դատապարտվեց ցմահ ազատազրկման՝ զրկվելով բողոքարկման իրավունքից:

Համբիկ Սասունյանը Ամերիկայի Կալիֆոռնիա նահանգի Սեն Քուենթին բանտում մինչ օրս շարունակում է ապրել հայրենիքով: Համբիկի եւ նրա նմանների շնորհիվ է, որ 1970-80-ականներին սփյուռքում լայն թափ ստացավ հայ զինյալ պայքարը, որի գերագույն նպատակն էր ճանաչել տալ 1915 թվականին իրագործված Հայոց ցեղասպանությունը:

Հանուն հայրենիքի եւ հայ ազգի արված գործողության համար դատապարտված հայ հերոսի ներման դիմումը Կալիֆոռնիայի բանտարկյալների ներման դիմումները քննող հանձնաժողովը բազմիցս մերժել է:

Հայ ժողովուրդը պայքարել ու պայքարելու է Համբիկի ազատության համար:

«ԱՊԱՌԱԺ»

Ակնկալում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն ավելի կոշտ մոտեցում կցուցաբերի. Դավիթ Բաբայան

Վերջին օրերին հակառակորդը պարբերաբար խախտում է հրադադարի ռեժիմը՝ սահմանի տարբեր հատվածներում դիվերսիոն փորձեր ձեռնարկելով: Հակառակորդի դիվերսիոն փորձերի եւ հրադադարի ռեժիմը խախտելու արդյունքում՝ հայկական կողմը վերջին երկու օրերին ունեցել է երկու կորուստ եւ մեկ վիրավոր: ԼՂՀ նախագահի տեղեկատվության գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանը aparaj.am-ի հետ զրույցում նշեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբին պետք է որ մտահոգի սահմանին առկա իրավիճակը. «Չեմ կարծում, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը մտահոգված չէ նման զարգացումներով, որովհետեւ այն քաղաքականությունը, որը վարում է Ադրբեջանը, ոչ միայն լուրջ վտանգ է ներկայացնում Ղարաբաղի եւ, առհասարակ, հարավկովկասյան տարածաշրջանի համար, այլ նաեւ տարածաշրջանում տապալում եւ հարված է հասցնում ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքներին: Ակնկալում ենք, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն ավելի լուրջ եւ ավելի կոշտ մոտեցում կցուցաբերի, համապատասխան քայլեր կձեռնարկի Ադրբեջանի նման պահվածքը կասեցնելու եւ նրան քաղաքակիրթ ու կառուցողական ուղի մտցնելու ուղղությամբ: Արցախն անելու է ամեն ինչ՝ իր անկախությունն ու ազատությունը պաշտպանելու եւ արժանապատվությունը բարձր պահելու համար»:

Խոսելով վերջին օրերին սահմանին տիրող անհանգիստ իրավիճակի մասին՝ Դավիթ Բաբայանը նշեց, որ Ադրբեջանը հատուկ ակտիվություն է ցուցաբերում տոների ժամանակ՝ Նոր տարվա նախաշեմին, Սուրբ ծնունդին, ինչպես նաեւ՝ Բաքվի կոտորածի օրերին, Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ:

«Ակտիվացման ժամանակ թշնամին հաշվի է առնում նաեւ Հայաստանի ներքին իրավիճակը, հատկապես, երբ հանրության ուշադրությունը բեւեռված է այնպիսի մեծ ողբերգությանը, ինչպիսին էր Գյումրիի դեպքը: Հաշվի առնելով այն սարսափելի ոճրագործությունը, որը ցնցեց նաեւ Արցախը՝ մի՞գուցե նրանք փորձում են այս օրերին էլ ակտիվություն ցուցաբերել՝ մտածելով, որ կորցրել ենք մեր զգոնությունը: Այն, ինչ անում է Ադրբեջանը, Ցեղասպանության քաղաքականության շարունակությունն է, ուրիշ ոչ մի բան: Մենք վերահսկում ենք իրավիճակը եւ հարկ եղած դեպքում կանենք ամեն ինչ, որպեսզի հակառակորդի ագրեսիվ պահվածքը զսպվի»:

Անի ԱՉԱՏՅԱՆ

Մինսկի խումբը կոչ է արել Ադրբեջանին՝ հավատարիմ մնալ հակամարտության խաղաղ կարգավորմանը

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ դեսպան Իգոր Պոպովը (Ռուսաստան), Ջեյմս Ուորլիքը (ԱՄՆ) եւ Պիեռ Անդրուն (Ֆրանսիա) Կրակովում հանդիպում են ունեցել Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ: Ներկա է եղել նաեւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկը: Համանախագահները հանդիպումից հետո հայտարարություն են տարածել, որում մասնավորապես ասված է.

«Մենք Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովին մեր խորին մտահոգությունն ենք հայտնել հայ-ադրբեջանական սահմանին եւ շփման գծում հարձակումների առնչությամբ, որոնց արդյունքում կան զոհեր: Բռնության աճը, որը սկսվել է անցյալ տարվանից, պետք է դադարեցվի՝ վերականգնելու համար վստահությունը եւ Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացում առաջընթաց գրանցելու համար:

Մենք կոչ ենք արել Ադրբեջանին՝ հավատարիմ մնալ հակամարտության խաղաղ կարգավորման լուծման իր ստանձնած պարտավորություններին: Մենք կոչ ենք անում նաեւ Հայաստանին՝ բոլոր միջոցները ձեռնարկել լարվածությունը նվազեցնելու ուղղությամբ: Բոլոր կողմերն էլ պետք է հետեւեն հրադադարի պահպանման ռեժիմի պայմանավորվածությանը: Բռնությունը խաթարում է խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը:

Մենք նախարարի հետ քննարկել ենք խաղաղության կարգավորման գործընթացի հետագա հնարավոր քայլերը՝ ներառյալ համապարփակ բանակցությունները, որոնք կարող են հանգեցնել խնդրի տեւական լուծմանը՝ ի շահ տարածաշրջանի բոլոր մարդկանց: Մենք Ադրբեջանի արտգործնախարարին հիշեցրել ենք Մինսկի խմբի համանախագահների մանդատի (լիազորությունների շրջանակի), Մինսկի խմբի համանախագահների դերի եւ ԵԱՀԿ դիտորդների պարտականությունների մասին եւ մտահոգություն հայտնել շարունակվող բանակցային գործընթացի վերաբերյալ հնչող քննադատության առնչությամբ:

Շեշտել ենք այն միջոցառումների կարեւորությունը, որոնց նպատակն է խուսափել հայ-ադրբեջանական սահմանին եւ շփման գծում պատահական միջադեպերից: Մենք նաեւ քննարկել ենք ԿԽՄԿ հովանու ներքո անհայտ կորածների տվյալների փոխանակման վերաբերյալ Նախագահների միջեւ ձեռք բերված համաձայնության շուտափույթ կատարումը»:

Համանախագահները պատրաստվում են մոտ ապագայում հանդիպել ՀՀ ԱԳՆ Էդվարդ Նալբանդյանին եւ այնուհետ այցելել տարածաշրջան:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կայացել է ԼՂՀ ԱԳ նախարարի տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսը

Հունվարի 26-ին տեղի է ունեցել ԼՂՀ արտաքին գործերի նախարար Կարեն Միրզոյանի տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսը:

Ասուլիսի ընթացքում Կարեն Միրզոյանը ներկայացրել է 2014 թ. ընթացում արտաքին քաղաքական ոլորտում կատարված աշխատանքները, ԼՂՀ միջազգային ճանաչման ուղղությամբ ունեցած հաջողությունները, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ կապված իրադարձությունները եւ նախարարության գալիք աշխատանքները:

Ինչպես նշել է Կ. Միրզոյանը, 2014 թ. առաջին անգամ խորհրդարանական մակարդակով Արցախի ինքնորոշման իրավունքը սատարող բանաձեւ է ընդունվել Եվրոպական մայրցամաքում, մասնավորապես՝ Բասկերի Երկրի խորհրդարանի կողմից: ԼՂՀ-ն անկախ պետություն ճանաչելու մասին հայտարարել է նաեւ Բասկերի երկրի Գիպուսկոա նահանգի նախագահը:

Նավարայի (Իսպանիայի ինքնավար մարզ) խորհրդարանի խոսնակների խորհուրդը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պետք է պարտադիր կողմ հանդիսանան ցանկացած բանակցային ձեւաչափի, որը կարող է վճռորոշ դերակատարություն ունենալ երկրի ապագայի համար:

ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացում նոր զարգացումներ են գրանցվել ԱՄՆ-ում. Ռոդ Այլենդից, Մասաչուսեթսից, Մենից եւ Լուիզիանայից հետո ամերիկյան Կալիֆորնիա նահանգը դարձել է հինգերորդը, որն ընդունել է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սատարող բանաձեւ:

Նախարարը նաեւ ընդգծել է այն, որ անցած տարում Արցախի եւ օտարերկրյա տարբեր համայնքների միջեւ ընդլայնվել են ապակենտրոնացված համագործակցության շրջանակները, բարեկամության հռչակագրեր են ստորագրվել Ֆրանսիայի Վիեն, Բուրգ լե Վալանս, Բուկ Բել Էր եւ Արցախի

Հադրութ, Շուշի եւ Ասկերան քաղաքների միջեւ: Քարվաճառի եւ Հադրութի հետ բարեկամական հարաբերությունների հաստատման մասին նման հռչակագրեր են ընդունվել նաեւ ամերիկյան Պիկո Ռիվերա եւ Բըրբանք քաղաքների կողմից: Համագործակցության մասին Համաձայնագիր է ստորագրվել նաեւ Ստեփանակերտի եւ Դոնոստիայի միջեւ (Բասկերի Երկիր):

Նախարարը կարեւորել է այն, որ Եվրախորհրդարանում մեկնարկել է Արցախի հետ բարեկամության խումբ ձեւավորելու գործընթացը:

Անդրադառնալով ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին՝ նա նշել է, որ 2014 թ. ադրբեջանական իշխանությունների վարած ապակառուցողական քաղաքականության պատճառով չի հաջողվել այդ հարցում իրական առաջընթացի հասնել: Ավելին՝ Ադրբեջանը ընտրել է ղարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի աննախադեպ սրման ճանապարհը:

ԼՂՀ եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում լարվածության այս կտրուկ աճը դարձել է Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի բազմաթիվ խախտումների եւ սադրանքների գագաթնակետ: Նման քայլերով Ադրբեջանը բացահայտ արհամարհանք է դրսեւորում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների եւ, ընդհանուր առմամբ, միջազգային հանրության հանդեպ:

Կարեն Միրզոյանն ընդգծել է, որ շփման գծում միջադեպերի հետաքննության մեխանիզմների անհապաղ մշակումն ու իրագործումը թույլ կտան բացահայտել հրադադարի ռեժիմի իրական խախտողին՝ ի դեմս Ադրբեջանի, եւ խուսափել հակամարտության կողմերին ուղղված անհասցե կոչերից, որոնք նրա մոտ ամենաթողության եւ անպատժելիության կեղծ զգացում են առաջացնում:

Նախարարն իր ելույթում խոսել է տեղեկատվական ոլորտում իրականացվող աշխատանքների մասին՝ նշելով, որ ԼՂՀ ԱԳՆ եւ ԼՂՀ մշտական ներկայացուցչությունները հետեւողական գործունեություն են ծավալում Հանրապետության մասին օբյեկտիվ եւ հավաստի տեղեկություն տարածելու ուղղությամբ, այդ թվում՝ մամուլի եւ սոցիալական ցանցերի միջոցով:

Կ. Միրզոյանը պատասխանել է նաեւ լրագրողներին հուզող հարցերին:

ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը համոզմունք է հայտնել է, որ 2015 թ. Արցախի համար լինելու է նոր ձեռքբերումների տարի:

«ԱՊԱՌԱԺ»

Նա բոլորիս իրեն հիշելու պարտադրանք է թելադրել

Վահան Հովհաննիսյանի ներկայությունը նշանակալի է եղել Հայաստանի քաղաքական դաշտում թե՛ արցախյան ազատամարտի տարիներին, թե՛ դրանից հետո՝ Հայաստանի խորհրդարանում: Դժվար է պատկերացնել, որ գաղափարական մարտիկի, կիրթ մտավորականի, պետական ու կուսակցական գործչի, փայլուն հռետորի եւ վառ անհատականությամբ ընդգծված նրա կերպարը այլեւս մաս չի կազմելու համահայկական քաղաքական գործընթացներին:

Դեկտեմբերի 28-ին, 58 տարեկանում, երկարատեւ եւ ծանր հիվանդությունից հետո կյանքից հեռացավ Հայ Յեղափոխական Դաշնակցության Բյուրոյի անդամ, Գերմանիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վահան Հովհաննիսյանը:

Վահան Հովհաննիսյանի մահը մեծ կորուստ է ոչ միայն Հայ Յեղափոխական Դաշնակցության, այլեւ հայ ժողովրդի համար:

Ստորեւ ներկայացնում ենք Վահան Հովհաննիսյանի մասին հուշեր: Պատմում են ընկերները:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյան.

Երբեմն դժվար է լինում մարդկանց գնահատել այն իրական արժեքով, որոնք իրենք ներկայացնում են: Այդ անձնավորություններից մեկը Վահան Հովհաննիսյանն էր, որին դժվար է որեւէ չափորոշիչով գնահատել: Զերծ մնալով գնահատման չափորոշիչներից՝ փորձեմ...

Հայ իրականության մեջ վերջին 20-25 տարիներին, որպես քաղաքական դեմք, որպես պետական դեմք, որպես ամենաբարձր ինտելեկտ ունեցող անհատ, ինձ համար առաջին հորիզոնականում Վահան Հովհաննիսյան է եղել: Եվ սա պատահականություն չէ, այն համոզմունք է եղել: Տասնամյակներ առաջ, պատերազմական օրերի մտերիմ եւ հաճախակի շփումներն են ստեղծել այսպիսի տեսակետ՝ արտահայտելու մեր նահատակ ընկերոջ մասին:

Ընկեր Վահանի հետ կապված հիշողություններ կան 90-ական թվականների սկզբներից մինչեւ վերջին տարիները՝ ընդհուպ Գերմանիայում ՀՀ դեսպան նշանակվելը: Բավականին հիշողություններ կապված են 1992, 1993, 1994 թվականների հետ: Բավականին հիշողություններ կան իր թեւավոր խոսքերի հետ կապված: Ամենածանր իսկ պահերին, երբ Արցախում էր լինում ընկեր Վահանը, մեզ համար արդեն հաղթանակի կանխազգացողությունը մոտ էր թվում, եւ այդ կանխազգացողության մեջ մեծ էր ընկեր Վահանի ներկայությունը: Նա իր լավատեսությամբ, իր սթափ եւ իրական գնահատականներով եւ վերլուծություններով հանդերձ փորձում էր մեզ ցույց տալ այդ ճանապարհը: Վահան Հովհաննիսյանի «Մայրամուտ, որը հարկավոր է կասեցնել» հոդվածի որոշ բաժիններ ինձ հիշեցնում են 90-ական թվականների այն իրականությունը եւ այն խոսքը, որ փոխանցում էր ընկեր Վահանը մեզ՝ որպես զինվորականների, մեզ՝ որպես կուսակցական ընկերների, մեզ՝ որպես քաղաքական գործիչների:

Մի քանի տարի առաջ էր. Վահան Հովհաննիսյանն ուղեկցում էր Ուրուգվայի խորհրդարանական պատվիրակությանը: Այցելության երկրորդ օրն էր, եւ պաշտոնական միջոցառումից առաջ խոսում էինք կարեւոր թեմաներից: Մեր զրույցն ընդհատեց հեռախոսազանգը: Ընկեր Վահանը պատասխանեց այդ զանգին: Պարզվեց՝ Սիրիայի մեր ընկերներից մեկն էր զանգահարողը, եւ փորձում էր ընկեր Վահանի միջոցով ճանապարհ փնտրել եւ հասնել Հայաստան: Իսկ ընկեր Վահանը պատասխանում էր՝ ես Հայաստանում չեմ, Արցախում եմ, եւ տվյալ պահին չեմ կարող օգտակար լինել: Առաջարկում էր այդ հարցով դիմել ՀՀ դեսպանատանը: Զանգահարող ընկերը պնդում էր՝ իսկ Թուրքիայով կարող են որեւէ ձեւով հարց լուծել: Ընկեր Վահանը խորհրդավոր ժպիտով պատասխանեց. «Ընկեր ջան, դու չգիտես, որ Սերոբ Աղբյուրն ու Սոսե մայրիկը վաղուց են սարերից իջել»: Հետո հարցրեցի, թե ինչ է եղել,



ընկեր Վահանը պատասխանեց, որ մեր ընկերներից մեկն է, փորձում է Թուրքիայով հասնել Հայաստան, եւ կարծես թե չի հասկանում, որ չկան մեր ֆիդայական խմբերը, որոնք իրենց համար ճանապարհ կբացեին եւ կուղեկցեին:

90-ական թվականներին, երբ շատ ոգեւորված խոսում եւ քննարկումներ էինք անում, մանավանդ՝ այդ տարիներին յուրաքանչյուր մարդ փորձում էր ներկայացնել, թե որքան է նվիրված հայրենիքին, ընկեր Վահանն ասում էր. «Հայրենիքը ձեզ չի մոռանա, բայց նաեւ չի հիշի»: Վահան Հովհաննիսյանի թեւավոր այդ արտահայտության առաջին բաժինը կարող ենք վերագրել հենց իրեն, բայց հենց նույն թեւավոր արտահայտության երկրորդ բաժինը իրեն վերագրել չի կարելի, քանզի ընկեր Վահանն այն կերպարներից մեկն է եղել, նա այնպիսի գործունեություն է ծավալել իր ողջ կյանքի ընթացքում, որ չհիշելու որեւէ առիթ չի տվել: Նա իր բարքերով, իր ամենօրյա հետեւողական գործունեությամբ կարողացել է բոլորիս իրեն հիշելու պարտադրանքը թելադրել:

ՀՅԴ ԿԿ անդամ Լեւոն Հայրյան

Ավաղ, վերջին ժամանակներս մեր ընկերների մասին ասված խոսքերում սկսել է ավելի ու ավելի մեծ տեղ գրավել հիշատակի մասին ասված խոսքերը, ինչը շատ դժվար է: Իրոք, դժվար է մեր կորցրած ընկերների մասին խոսելը: Այնուամենայնիվ, կա ավելի վատ բան, ինչից թող Աստված մեզ հեռու պահի: Դա այն է, երբ որեւէ մի գործչի կամ մարդու մասին նրա գնալուց հետո ասելու բան չի լինում: Այս առումով՝ ընկեր Վահանի մասին անվերջանալի ասելիքներ կան: Ասելիքներ կան նրա նվիրվածության մասին. նվիրվածություն հայրենիքի հանդեպ, նվիրվածություն Դաշնակցության գործին: Եվ դա հասարակ նվիրվածություն չէ, այլ նախանձելի անկեղծությամբ նվիրվածություն: Ասելիք կա նրա կատարած շատ գործերի մասին, ասելիք կա նրա բնատուր խելքի եւ օժտվածության մասին, ասելիք կա նաեւ անգամ նրա սրամտության եւ կատակասիրության մասին: Մինչ Վահանի հետ առաջին հանդիպման մասին խոսելը՝ ասեմ, որ երբ Դաշնակցությունը վերադարձավ Հայաստան եւ սկսեց վերակազմակերպվել հայրենիքում, նա մեծ դեր ունեցավ այդ գործընթացներին: Դաշնակցության առաջին խմբերի կազմակերպման գործում եւ երեւի հենց նույն գործի ընթացքում էլ ծանոթացանք նրա հետ: Դա 1992 թվականի ապրիլն էր: Հանդիպեցինք Մեծ Թաղլար գյուղում: Այդ օրը մեր մարտական ընկերներից մեկի թաղումն էր, եւ Վահանը ներկա էր թաղմանը: Հետո, երբ հավաքված քննարկում էինք ազգային ազատագրական պայքարի տվյալ փուլի հարցերը ընկեր Վահանի եւ Հադրութի դաշնակցական ընկերների հետ, այդ ժամանակ մեր ընկեր Արթուր Աղաբեկյանը մի պահ ընդհատեց մեր քննարկումները եւ դիմեց ինձ հարցով, թե ինչու ես, որ Դաշնակցության գաղափարախոսության ամենաեռանդուն տարածողներից եմ, առայժմ չեն ընդգրկվել Դաշնակցության կառույցում: Այստեղ բոլորն ինձ սկսեցին հանդիմանել, եւ հարց դրվեց կուսակցության շարքերն ընդունվելու մասին: Այստեղ ընկեր Վահանն առաջարկեց՝ լինել ինձ կնքահայր: Ես տվեցի իմ համաձայնությունը, եւ ընկեր Վահանի գլխավորությամբ ու քավորությամբ կազմակերպեցին իմ ընդունելությունը Դաշնակցության շարքերը: Այսօր ինձ համար ուրախալի է ասել, որ իմ կնքահայրերից մեկը եղել է ընկեր Վահանը, եւ ավելին՝ ես երդումս տվել եմ նրան պատկանող զենքի վրա: Սակայն դառնանք Վահանին՝ որպես քաղաքական գործիչ, եւ նորից նշենք նրա անկեղծ նվիրվածությունը Դաշնակցության եւ հայության ազնիվ գործին: Այդպիսի անկեղծ նվիրվածություն ունենում են մանուկներն՝ իրենց մանկական խաղերի մեջ: Հետագայում, ցավոք, մեծանալով՝ մենք բոլորս հաճախ սկսում ենք քաղաքականացնել մեր անկեղծությունը: Իսկ Վահանն այդպես չէր: Եվ քանի նվիրված ենք նույն գործին, եւ այսօր Վահանը չկա, ուստի ես Վահանի պարագայում էլ կուզեի կրկնել Զահրատի տողերը. «Խաղը կիսատ թողեցիր. չեղավ ասիկա...»: Վահանը խաղը կիսատ է թողել, բայց չի կարելի ասել, որ նա քիչ է աշխատել: Մեր նորօրյա պատմության մեջ քիչ ունենք քաղաքական գործիչներ, ովքեր նրա չափ աշխատած լինեն, այսինքն՝ նա գործին պարտք չի մնացել: Մենք ենք մեր պայքարում զգալու նրա պակասը, մենք ենք զգալու նրա սկզբունքայնության պակասը, բայց Դաշնակցությունը, առավել եւս՝ նրա երիտասարդ թեւը, անպայման իր մեջ ուժ կգտնի՝ նրա եւ բոլորիս կենդանի գործը շարունակելու՝ ի փառս եւ ի բարօրություն հայ ազգի: Ընդ որում, Վահանին եւ մնացած մեր ընկերներին, որոնք այսօր մեզ հետ չեն, պետք չէ հիշել՝ որպես ֆետիշներ, այլ՝ որպես կենդանի գործի ռահվիրաներ եւ օրինակներ:

Քանի որ բոլորին հայտնի է նրա կատակասիրությունը, եւ մենք էլ շեշտեցինք նրա այդ հատկությունը, մի փոքրիկ դրվագ պատմեմ: Երբ 2008թ. Դաշնակցությունը որոշեց նախագահության իր երկու թեկնածուների համար համընդհանուր ուսումնասիրություններ անցկացնել, Երեւանում տեղադրվեցին վրաններ, որտեղ ժողովուրդը մտնում եւ քվեարկում էր, թե Դաշնակցությունից ում թեկնածությանն են կողմ նախագահական ընտրություններին մասնակցելու համար՝ Արմեն Ռուստամյանի, թե Վահան Հովհաննիսյանի: Ընկեր Վահանին մոտեցավ Դաշնակցության հանդեպ ոչ բարեկամական տրամադրված մի լրագրող՝ ուզենալով անպայման մի բացասական էլեմենտ նկատել, եւ հարց տվեց՝ որտեղի՞ց ձեզ այսքան վրաններ: «Խանասորի արշավանքից են մնացել»,- պատասխանեց ընկեր Վահանը:

Ընկեր Վահանին մենք կհիշենք՝ որպես անփոխարինելի ընկեր: Եվ, իրոք, նա այդպիսինն էր: Բայց ինչ վերաբերում է գործին՝ իհարկե, այն գործը, որն ինքն էր անում, ուրիշ մեկն այն անել չի կարող: Բայց, քանի որ գործը պետք է արվի, Դաշնակցությունը նրա գործը կիսատ չի թողնի: Եվ, ինչպես Պետրոս Սեմերջյանի մասին երգում է ասված

«Ահա հանգիստ հող կմտնեմ,
Հույսս դուք եք, ընկերներ,
Շարունակեք մեր սուրբ գործը,
Դաշնակցության վեհ քաջեր»:

Այն սերմերը, որ ինքն է ցանել, Հայաստանի քաղաքական դաշտում առողջ ծիլեր են տվել: Եվ հենց այդ ծիլերը կդառնան ամուր ծառեր ու կշարունակեն «հսկա կաղնիի» գործը:

Ա. ԱՂԱՏՅԱՆ

Նրանք միասին ծովեր ունեին անցնելու...

Հերոսներն իրենք են կերտում իրենց կերպարը, սակայն այդ կերպարն անաղարտ պահելու-պահպանելու պատասխանատվության մի մասը կրում են նրանք, ովքեր կոչված են ամբողջ կյանքում նրանց ուղեկիցը լինելու: Հայ կինն այս առումով միշտ առանձնացել է իր առաքինությամբ ու ոչ պակաս հերոսական կերպարով: Արցախյան ազատամարտը նորից ցույց տվեց, որ հայ կինը կարող է նաեւ միայնակ իր ուսերին կրել ընտանեկան ողջ բեռը, հայրերի դասերը փոխանցել որդիներին՝ պատվով մեծացնելով հայրենիքին արժանի նոր զինվորներ...

Նելլի Ղուլյան անունն Արցախում շատերին է հայտնի: Նրան ճանաչում ու սիրում են ոչ միայն հերոս ամուսնու անունով, այլեւ յուր պարկեշտ, ազնիվ ու հայեցի կերպարով...

Ղուլյանների հյուրընկալ բնակարանում ինձ առաջինը դիմավորեց փոքրիկ Աշոտիկը, ով իր աշխույժ ու մարդամոտ խաղերով ինձ ներս հրավիրեց: Ապա վազեց ու թաքնվեց Նելլի տատիկի գրկում: Նրանք համեստորեն իրար փարվեցին, եւ ես անսահման սեր տեսա կնոջ տառապած աչքերում: Նելլին արդեն տատիկ է. որքա՜ն տարիներ են անցել... Առանց Աշոտի նա արդեն տատիկ է... Նոր Աշոտ է ընտանիքում մեծանում, նոր հույս, նոր ապավեն, նոր զինվոր... Տա Աստված՝ նա միայն ու միայն խաղաղության զինվոր լինի...

«Աշոտը երեխաներ շատ էր սիրում,- պատմում է Նելլին,- պատերազմի օրերին նրան տանը չէինք տեսնում, բայց երեխաների ծննդյան օրերին անպայման գալիս էր, թեկուզ մի քանի րոպեով: Գրկում էր երկու տղաներին, մի լավ խաղում հետները ու նորից հեռանում: Թե ուր էր հեռանում, դեպի որ կողմը, որ մարտին՝ չէր ասում. չէր սիրում այդ մասին խոսել: Մենք միշտ նրան սպասում էինք: Հիմա էլ, այսքան երկար ու ձիգ տարիների բաժանումից հետո, ես չեմ հավատում, որ նա հեռու է մեզանից: Ասես՝ շարունակում է ապրել մեզ հետ, մեր կողքին, մեր հոգսերով, անհրաժեշտ պահին խորհուրդ է տալիս, չի թողնում նեղսրտեմ... Աշոտը միշտ կա...Պատկերացնում եմ, թե նա ոնց կխաղար փոքրիկ Աշոտիկի եւ մյուս երկու թոռնիկների հետ...»:

Տիկին Նելլին երեք որդիների մայր է: Փոքր որդին ծնվել է հոր մահից մի քանի ամիս հետո: Աշոտ Ղուլյանի մարտական ընկերները նրան կոչել են Բեկոր՝ հոր մարտական անունով: Նելլին չի ընդդիմացել, թեեւ ամեն անգամ որդուն կանչելիս՝ անհաշվելի արցունքներ է կուլ տվել՝ որդիներից թաքցնելով կորստի մրմուռը:

«Աշոտը դառը մանկություն է ունեցել,- պատմում է Նելլին,- նա ծնվել ու մեծացել է Բաքվում: Երբ դեռ 6 տարեկան էր, կորցրեց եղբորը՝ Արթուրին: Աշոտն ու Արթուրը, ով 5 տարեկան էր, բակում խաղում էին: Աշոտի աչքի առաջ ադրբեջանցի վարորդը մեքենայի տակ է գցում եղբորը, թողնում ու անհետանում: Եղբոր կորուստն ընդմիշտ մնում է Աշոտի սրտում, ու երեւի հենց այդ պահից նրա մանուկ հոգում ծնունդ է առնում ատելությունը: Այդ ատելությունն էլ ավելի է կուտակվում, երբ հիվանդ մայրը կորստի ցավից մահանում է: Մոր մահից հետո ընտանիքով տեղափոխվում են Ստեփանակերտ...»:

Աշոտն ու Նելլին ամուսնանում են 1985-ի սեպտեմբերին: 1986-ին ծնվում է նրանց առաջնեկը՝ Արթուրը: Հետո կամաց-կամաց սկսում են քաղաքական խմորումները, Աշոտը դառնում է անհանգիստ, մտահոգ, քչախոս: Հայրենիքի վիշտը տանջում էր նրան: Նա հասկանում էր, որ առանց արյունի Արցախի հարցը չի լուծվի: Պատերազմն անխուսափելի է: Լծվում է զենք հայթայթելու գործին: Ընկերների՝ Արկադի Կարապետյանի, Վալերի Բալայանի, Աշոտ Սարգսյանի եւ շատ ուրիշների հետ գաղտնի զբաղվում են զենք հայթայթելու գործով, գործում են գաղտնի: Նելլին անկեղծանում է. «Այդ ժամանակ դեռ լավ չէի պատկերացնում նրա գործը, երբ հարցնում էի՝ սաստում էր, ասում, որ դա կնոջ գործ չէ: Կամաց-կամաց սկսեցի հասկանալ, որ վիճակն օրհասական է, հայրենիքի լինել-չլինելու հարցն է...»:

Աշոտն ինքնաշեն զենքեր էր պատրաստում՝ ինքնաձիգ, նռնականետ, նռնակ, հրացան եւ այլն: Ընկերների հետ սկսում է մասնակցել պարտիզանական մի շարք գործողությունների:

1991 թվականին, երբ սկսվում է արցախյան բանակի առաջին զորամասերի կազմավորումը, Աշոտ Ղուլյանի հրամանատարությանն է հանձնվում առաջին՝ գլխավոր վաշտը: Աշոտը մասնակցում է շատ ու շատ մարտերի՝ Ասկերանի, Հադրութի, Շահումյանի, Բուզլուխի, Վերին շենի, Մանաշիդի, Մալիբեկլուի, Խոջալուի, Կրկժանի, Լեսնոյի, Քարին տակի, Շուշիի, Լաչինի, Մարտակերտի, Կուսապատի, Մաղավուզի, Սրխավենդի, Բաշ-գյունեփայայի, Օրթա-գյունեփայայի, Դրմբոնի...

Նրան կնքեցին մարտական անունով՝ Բեկոր /Ասկոլկա/: Մարմինը լցված էր բեկորներով, բազմիցս վիրավորվել էր, բայց տոկուն էր:

«Հայրենասիրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ քեզ վրա դրված պարտավորությունների բարեխղճորեն կատարում»: Սա Աշոտի մտքի գոհարներից է: Մարդ, ով բարձրագույն կրթություն չուներ, ծնվել-մեծացել էր Բաքվում, հայրենիքից հեռու, սակայն այնքան մոտ, այնքան հարազատ էր զգում Արցախը: Արցախի կանչը նրա արյան մեջ էր. այդ կանչով էր ապրում: Այդ կանչն էր նրան մարտի տանում:

Տիկին Նելլին հիշում է. «Աշոտը մի օր Դաշնակցության կանոնագրությունն իր հետ բերեց տուն, կարդում էր: Հետո իմացա՝ ընկերների հետ զինվորագրվել է Դաշնակցությանը»:

Աշոտը չէր հասցնում տան հոգսերով զբաղվել, ավելի կարեւոր գործ ուներ, պատերազմ էր: Տան հոգսերը Նելլին միայնակ էր կրում: Երբ պիտի ծնվեր երկրորդ որդին՝ Համայակը, Աշոտը կողքին չէր: Կնոջ նուրբ սիրտը ցավում էր, նեղացավ ամուսնուց: Հետո ամեն ինչ պարզ դարձավ. այդ նույն օրը Եղվարդում վիրավորվել էր կոկորդից, ինքնաշեն զենք էր փորձարկում: Կլինիկական մահ էր տարել: Չէր ուզում Նելլին իմանար: «Օրեր անց, երբ եկավ, ամեն ինչ իմացա: Նա կողքիս փռշտաց եւ բեկորը կոկորդից դուրս թռավ: Ես ինձ մեղավոր զգացի նրա առաջ»:

Աշոտը 11 անգամ վիրավորվել է տարբեր մարտերում: Ամբողջ մարմինը բեկորներով լցված այդ տղամարդը չէր ընկրկում ոչ մի ցավի առաջ, նորից ու նորից մարտի էր նետվում: Տղաները հորդորում էին, որ իրեն լավ նայի, մնա տանը կամ հոսպիտալում, չէր ընդունում ոչ մի զրույց, ծիծաղում էր: Նրա շուրջը լեգենդներ էին հյուսվում: Շատերը գիտեին, թե հաղթանդամ, տարիքով մի տղամարդ է, այնինչ հասարակ, նիհար մի տղամարդ էր, հոգում՝ մեծ սեր, մեծ հարստություն...

«1991-ին մի օր ինձ ասաց՝ պիտի տեղափոխվենք Խնձրիստան: Իմ եւ նրա հայրերն այդ գյուղից են: Երբ իմացա, որ պիտի գյուղում մնանք, սկսեցի երկմտել՝ արդյոք ինչո՞վ եմ գյուղում զբաղվելու, ինչպե՞ս կհարմարվեմ: Ես քաղաքում եմ ծնվել, քաղաքում մեծացել»,- մի խորհրդավոր ժպիտ կանգ է առնում Նելլիի շուրթերին: Աշոտի խոսքերն է մտաբերում. «Ի՞նչ պիտի անես, մանկապարտեզի վարիչ կլինես, երեխաներ կդաստիարակես»:

Աշոտը երեւի կանխազգում էր, որ մի օր՝ տարիներ անց, Նելլին, իրոք, մանկապարտեզի վարիչ կդառնա: 1998-ին Նելլին պիտի անդամագրվեր Հայ օգնության միությանը եւ դառնար ՀՕՄ-ի Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզի վարիչ...

«Գյուղում գիշերը տղերքով հավաքվում էին մեր տան նկուղում, ժամերով զրուցում: Չէր թողնում իջնեմ նկուղ: Օրեր անց իմանում էի նրա ու նրա զինվորների հաղթանակների մասին: Պատահում էր հաճախ՝ մեծ խմբով տուն էին գալիս: Աշոտը շտապ պատվիրում էր սեղան բացել: Ինչ պատահի, ինչ տանը կար, դնում էի սեղանին, եղած-չեղածից մի բան էի սարքում, տղերքն ախորժակով ուտում էին: Ես էլ մեծ բավականություն էի ստանում»,- շարունակում է թերթել հիշողության էջերը:

Դրմբոն գյուղի ազատագրման համար մղվող մարտը ճակատագրական եղավ Բեկոր-Աշոտի համար: 1992 թվականի օգոստոսի 24-ին գնդակը գտավ հերոսին: Այդ օրը նա միացավ բոլոր նրանց, ովքեր կոչված են հավիտյանս ապրելու, ովքեր իրենց կյանքով ու գործով անմահության վկաներ են...

Առանց Աշոտի Նելլին երեք տղաներ է մեծացրել: Երբ հարցնում եմ որդիների մասին, նա հպարտությամբ է լցվում: Մեծը՝ Արթուրը, մինչեւ վերջերս ծառայում էր այն գնդում, որի հրամանատարն էր հայրը: Միջնեկը՝ Համայակը, սովորում է Հունաստանում, ապագա ռազմական բժիշկ է, իսկ փոքրը՝ Բեկորը, գյուղատնտեսի մասնագիտություն ունի, աշխատում է Գյուղատնտեսության նախարարությունում:

Նելլին 1998-ից մինչ այսօր աշխատում է Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզում՝ որպես տնօրեն:



Աշոտ Ղուլյանին, հայրենիքին մատուցած բարձր ծառայության համար, հետմահու շնորհվել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի, «Ոսկե արծիվ» շքանշաններ, արժանացել է «Արցախի հերոս» կոչմանը: ԼՂՀ կենտրոնական պաշտպանության շրջանի առաջին գումարտակը, որը ստեղծվել է առաջին վաշտի հիմքերի վրա, այսօր կրում է Բեկորի անունը: Ստեփանակերտում կանգնեցված է նրա հուշարձանը: Հուշարձանի վրա գրված է՝ ես ծովն եմ սիրում:

Աշոտը ծով շատ էր սիրում, երազանք ուներ՝ ցանկանում էր շրջել բոլոր ծովերով, տեսնել, ծանոթանալ, թե ինչպես են ապրում տարագիր հայերը...

«Դժվար օրեր շատ ենք ունեցել, բայց գոտեպնդվել եմ: Միշտ մտածել եմ՝ իրավունք չունեմ ընկճվելու, Աշոտը երեւի նայում է վերեւից, չի ների»,- Նելլին թաքցնում է հուզմունքը:

- Տատի, շոկոլադ կուտե՞ս,- նկատելով տատի տխրությունը՝ մեր զրույցին խառնվում է փոքրիկ Աշոտիկը:

- Չէ, դու կեր, տղա՛ս. կեր, որ շուտ մեծանաս:

Աշոտիկը տատիկի գրկում ժպտում է....

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Հայ կինն էլ զինվոր է

Արմինեն բացում է ընտանեկան հին ալբոմը: Աչքերը կանգ են առնում հարսանեկան լուսանկարին: Կարոտը խոնարհվում է լուսանկարին: Կարոտը ստիպում է ժպտալ... Լուսանկարում Արմինեն ուրիշ է, ավելի ճիշտ՝ աչքերն են ուրիշ. լի անբացատրելի այն փայլով, որ ունենում են երջանիկ կանայք... Պատերազմ եւ երջանկություն...

Արմինեն հիշում է հարսանիքի օրերը: Երկու օր, երկու գիշեր հարսանիք արեցին: Պատերազմ էր: 1992 թվականի հոկտեմբերի 24-ին եւ 25-ին Ասկերանի շրջանի Շոշ գյուղում, թեեւ առանց զուռնա-դհոլի, բայց թնդում էր Արգամի եւ Արմինեի հարսանիքը: Ագոն դեմ էր, որ հարսանիքին երգ-երաժշտություն հնչի: «Ամեն օր ընկերներ ենք կորցնում, ահեղ մարտեր են, որդեկորույս մայրեր... Բեկորը չկա: Առանց նրա ես ո՞նց հարսանիք անեմ»,- անընդհատ կրկնում էր: Սակայն մի թաքուն միտք կրծում էր ուղեղը. «Իսկ գո՞ւցե վաղն էլ ես չլինեմ, ո՞վ գիտե իր ճակատագիրը...Պետք է գոնե մի ժառանգ թողնեմ»:

Հարսանիքի առաջին օրն անցավ առանց երգ ու պարի, երկրորդ օրն ընկերները հորդորեցին, ու Արգամը մի կերպ համաձայնեց, որ սովորական մագնիտոֆոն միացնեն...

Արմինեն մի պահ կանգ է առնում, հիշում է հարսանիքի տեսագրության մասին: Պահարանից հանում է հարսանիքի տեսագրությունը: Միացնում է: Զինվորները պարում են ազգային երգերի ներքո՝ ասես ի հեճուկս պատերազմի: Նրանց շարքերում ծանոթ դեմքեր են: Նրանցից շատերն այսօր չկան: Արգամը զինվորական համազգեստով է, կրծքին՝ ճերմակ վարդ: Զինվորն ամեն տեղ, ամեն ժամ զինվոր է:

«Ես զինվորական հագուստս չեմ փոխի եւ զենքս վայր չեմ դնի, մինչեւ Արցախն ազատ չտեսնեմ»,- Արմինեն հիշում է Արգամի խոսքերը:

Հարսանիքի ներկաների շարքում Քերոլայն Քոքսն է, ով Արցախյան պատերազմի տարիներին յուր բարի կամքն ու օժանդակությունը ցուցաբերեց պայքարող ժողովրդին: Բոլոր բաժակաճառերում երջանկության մաղթանքներ են... Բոլոր բաժակաճառերը խոսում են Արցախի ազատության նվիրական երազանքի մասին...

Ամուսնու կենսագրությունն Արմինեն պատմում է թաքուն մի հպարտությամբ, որ ինչքան էլ փորձում է թաքցնել, մեկ է՝ աչքերը մատնում են հիացմունքը: Եվ, իրավ, հերոսներով պետք է հպարտանալ, քանզի նրանք ամեն օր չէ, որ ծնվում են: Նրանք ծնվում են ժամանակի ու պատմության հրամայականով, ապրում են հայրենիքի հավատամքով՝ իրենք էլ չգիտակցելով, որ կերտում են այն փառավոր պատմությունը, որ սերունդների համար պիտի հպարտություն դառնա:

Արգամ Հարությունյանին շատ հաճախ ընկերները կոչում են Շոշի Ագո՝ հայրենի գյուղի անունով: Այս անվան տակ ամփոփված է մի ամբողջ մարտական կենսագրություն: Շոշի Ագոն այն առաջիններից էր, ով Արցախյան շարժման նախօրեին գիտակցում էր, որ զենքի անհրաժեշտություն է լինելու. միայն զենքով ու միասնականությամբ կարող են հասնել բաղձալի ազատությանը: Ագոն առաջիններից էր, ով զինվորագրվեց Արցախի պաշտպանությանը:

Նա հասկանում էր, որ զենքի խնդիր կա, ուստի լծվում է զենք հայթայթելու վտանգավոր գործին: Ագոն կազմակերպում, հիմնադրում է ենթաշրջանի մի քանի գյուղերի միացյալ ջոկատը՝ Շոշի ջոկատ անվամբ: Շոշի ջոկատը մասնակցում է Տողի, Սարիշենի, Քարին տակի, Մալիբեյլուի, Խոջալուի, Հորադիզի, Կուբաթլուի, Ջաբրայիլի, Աղդամի, Մարտակերտի շրջանի, Օմարի լեռնանցքի, Ֆիզուլիի, Շուշիի, Ջանհասանի, Կրկժանի, Ասկերանի եւ շատ այլ մարտերի:

Շուշիի ազատագրման ժամանակ ջոկատը փայլուն մասնակցություն է ցուցաբերում, աչքի ընկնում իր կազմակերպվածությամբ, հմտությամբ ու մարտունակությամբ:

Ագոյի ջոկատն աչքի է ընկնում նաեւ Բերդաձորի եւ Քաշաթաղի ազատագրման ժամանակ:

Ագոն քայլ առ քայլ կերտում էր իր մարտական ուղին, որ Արցախի հերոսական էջերից է: Ականատեսները պատմում են՝ նա խուսափում էր տեսախցիկներից ու լուսանկարիչներից: «Որեւէ մեկը չփորձի ինձ նկարահանել կամ նկարել. չեմ սիրում եւ վերջ»,- ասում էր: Ո՞վ կարող էր շեղվել նրա խոսքից:

Զարմանալի է, որ բոլոր իրական հերոսներն այդպիսին են: Նրանք խուսափում են էկրաններից, նրանք գովեստներ ու գովազդներ չեն սիրում... Նրանց անունն արդեն իսկ պատմություն է:

1992-ին Արգամ Հարությունյանը Բեկոր-Աշոտի գումարտակի շտաբի պետն էր: Բեկորն ու Ագոն լրացնում էին մեկը մյուսին: Նրանց միասնությունն արդեն հաղթանակ էր ինքնին...

Մարտական ընկերները պատմում են, որ Ագոն մի առիթով ասել է. «Ես չեմ վախենում թուրքի գնդակից: Ինձ կամ թիկունքից կարող են կրակել, կամ էլ՝ ականի պայթունից կարող եմ զոհվել»: Այդպես էլ եղավ...

1994-ի մարտի 8-ը ոչ միայն Արմինեի, այլեւ ողջ Արցախ աշխարհի համար մահաբեր բոթ բերեց: Ֆիզուլիի պաշտպանության ժամանակ Ագոն ընկավ ականի պայթյունից. ավելի ճիշտ՝ անմահացավ, քանզի հերոսները չեն ընկնում, նրանք լոկ անմահանում են: Ագոյի 26 գարունները երբեք-երբեք չեն թառամի...

Ագոն ՀՅԴ անդամ էր: Նրա յուրաքանչյուր քայլը հավատարիմ էր իր որդեգրած գաղափարին, իսկ գաղափարն այդ ոչ այլ ինչ է, քան նվիրում առ հայրենիք:

Հետմահու, հայրենիքին մատուցած ծառայությունների համար Արգամ Հարությունյանն արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի եւ «Շուշիի ազատագրման համար» շքանշանների: Նրա անունը հավերժացնող հուշակոթող է կանգնեցվել հայրենի Շոշի գյուղամիջում, որտեղ ամփոփված է հերոսի աճյունը:

Ագոյի մարտական ընկեր Արկադի Կարապետյանը մի առիթով ասել է. «Ագոն մեր ազգի սյուներից է: Բառերով չեմ գտնում նրան նկարագրելու, միայն կասեմ, որ նա ոչ միայն մարտական ընկեր էր, զինվոր եւ զորավար, այլ նաեւ քաղաքական գործիչ... Ագոն ամեն օր իրեն զոհաբերում էր...»:

Ագոն երազում էր արու զավակ ունենալ, եւ Երկնայինը ի կատար ածեց նրա փափագը: Արմինեն արու զավակ շնորհեց, որին կոչեցին հայրական պապի՝ Սերգեյի անունով: Սերգեյն ընդամենը 7 ամսական էր, երբ զրկվեց հորից: Ագոն այդպես էլ չհասցրեց ճաշակել երազանքի բերկրանքը:

Սերգեյն այսօր, բնականաբար, չի հիշում հորը: Ապրում է մոր, հարազատների, հայրիկի մարտական ընկերների հիշողություններով: Իսկ այդ հիշողություններն այնքան շատ են, այնքան հարուստ, որ ստեղծում են սիրելի հոր անմիջական, անկեղծ, խիզախ, բոլորանվեր կերպարը:

Արմինեն, որպես առաքինի հայուհի, թեկուզ մենակ, բայց պատվով է մեծացրել որդուն, որպեսզի նա Ագոյի եւ նրա նմանների արժանի սերունդը լինի եւ գիտակցի, որ հայն ազգովի զինվոր է, քանզի հայի համար պատերազմները երբեք չեն ավարտվում...

2011 թվականին Արմինեն անդամագրվեց Արցախի Հայ օգնության միությանը: «Հայ կինն էլ զինվոր է յուրովի,- ասում է Արմինեն եւ ավելացնում,- միշտ համակրանքով եմ հետեւել ՀՕՄ-ի մարդասիրական, բարեսիրական աշխատանքներին, եւ պատահական չէ, որ որոշեցի անդամագրվել ՀՕՄ-ին»:

2013 թվականին Արմինեն ընտրվեց ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղի ատենապետուհի, եւ, ինչպես ինքն է ասում, իր համար սա ամենամեծ կոչումն է:

«Ժողովրդիս հետ, ժողովրդիս համար». սա է ՀՕՄ-ի կարգախոսը: Այս կարգախոսով էլ, արդեն ավելի քան մեկ դար, միությունը մեծ դեր է ստանձնել հայրենիքում եւ սփյուռքում՝ դառնալով հայրենիք-սփյուռք միասնության մի ամուր օղակ...

Արմինեն սեղան է բացում: «Այս տուն մտնողն առանց հացի չի հեռանա: Սա մեր օջախի կանոնն է»: Ես ժպտում եմ եւ միաժամանակ հետեւում նրա փութաջան շարժումներին: Որքան անկեղծ են նրա խոսքն ու շարժումները, որքան ուժ ու եռանդ կա այս կոտրված, բայց կանգուն, այս նուրբ, բայց եւ ամուր, հաստատակամ կնոջ մեջ:

Պատերազմը խլեց նրա երջանկությունը, սակայն չկարողացավ կոտրել պայքարելու ոգին: Նա իր մեջ ուժ գտավ հաղթելու ցավը, ուժ գտավ ամուր հենվելու, կանգնելու, քայլելու այն հողի վրա, որ ազատագրվեց Ագոյի ու ագոների արյան գնով: Ամուսնու կորուստը նա մխիթարեց որդու՝ Սերգեյի անսահման սիրով՝ նրա ամեն մի շարժման, ամեն մի խոսքի, դիմախաղի մեջ նորից ու նորից վերագտնելով ամուսնուն:

«Նոր տարվա նախօրեին ՀՕՄ-ուհիներով այցելեցինք Արցախի տարբեր զորամասեր, ծանոթացանք զինվորների առօրյային, փոքրիկ նվերներ հանձնեցինք: Այսօր ամենամեծ գործը նրանք են անում,- ասում է,- թող ամեն ոք քնելուց առաջ աղոթի սահմանը հսկող զինվորների համար, աղոթի այնպես, ինչպես իր հարազատ զավակի համար կաղոթի... Աստված ուժ տա նրանց բազկին...»:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

«Արցախի ազգային վիճակախաղը» հանձնում է առաջին շահումները

Օրերս «Արցախի ազգային վիճակախաղի» գրասենյակում կայացավ վիճակախաղի շահումների հանձնման արարողություն: Ութ քաղաքացիներ իրենց հետ տարան վիճակախաղի արդյունքում ունեցած 9 շահումներ՝ արցախյան արտադրության հինգ գորգեր եւ չորս թթի օղի՝ թթի փայտից պատրաստված տակառներում:

«Արցախի ազգային վիճակախաղ»-ը, որը կրում է «Շահում ես դու, շահում է երկիրը» կարգախոսը, նպատակ ունի համայն հայության ուժերով նպաստել Արցախի վերաբնակեցմանն ու զարգացմանը:

Վիճակախաղի ամբողջ հասույթն այս տարի եւս ուղղվել է Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր համայնքում վերաբնակիչների համար բնակարանների կառուցմանը: «Սա շահումների տրամադրման առաջին փուլն է, որից հետո ճանապարհվելու ենք Երեւան, որտեղ հանձնվելու է մոտ 71 շահում,- aparaj.am-ի հետ զրույցում ասաց ԼՂՀ ազգային վիճակախաղի տնօրեն Ալեքսանդր Արզումանյանը եւ հավելեց,- ներկայումս Հայաստանում գրանցվել է 71 շահող, բայց մեր տվյալներով՝ մոտ 150 շահող պետք է լինի Հայաստանում: Փուլ առ փուլ կսկսենք բաժանել շահումները»:

Ա. Արզումանյանի տված տեղեկությունների համաձայն՝ շահումներ եղել են ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայից, Լիբանանից, Իրանից, Կիպրոսից, Ֆրանսիայից: «Ընդամենը եղել է 350 շահում, ամենաշատ շահումը եղել է Հայաստանի Հանրապետությունում,-

նշեց Ա. Արզումանյանը,- շահումները եղել են գորգեր, թթի օղի եւ բնակարան: Բնակարանը շահել են Իրանից»:

Այս տարի վիճակախաղի իրացման մակարդակն Արցախում եւ, առհասարակ, վիճակախաղի տոմսերի իրացումը նախորդ տարվա համեմատ զգալի նվազել է: Նախորդ տարվա համեմատ՝ այս տարի վիճակախաղի տոմսերի գրեթե կեսն է իրացվել: Անցած տարի իրացվել է 261 505 տոմս, այս տարի՝ 141 000 տոմս: Վիճակախաղի տոմսերի համեմատաբար քիչ վաճառվելը Ալեքսանդր Արզումանյանը կապում է Ռուսաստանում առկա ճգնաժամի հետ, որի արդյունքում ռուբլին արժեզրկվել էր, դոլարի արժեքը՝ բարձրացել, իսկ վիճակախաղի տոմսերը, Ա. Արզումանյանի մեկնաբանմամբ, վաճառվում էր դոլարով:

«Արցախի Ազգային վիճակախաղի» նպատակն է՝ Արցախի վերաբնակեցման ծրագրերին աջակցելը, հատկապես՝ Իշխանաձոր համայնքում բնակարանաշինության իրագործումը: Ա. Արզումանյանի խոսքերով՝ վերջին թանկացումների հետ կապված, որի արդյունքում թանկացել են նաեւ շինանյութերը, հաշվարկներ են կատարում, թե քանի բնակարան կկարողանան կառուցել այս տարի. «Անցած տարի կառուցել ենք 10 բնակարան: Կառուցման աշխատանքները կավարտվեն փետրվարին: Մենք նախատեսել ենք ծրագիրը շարունակել նույն տեմպերով»:

Աշոտ Ասատրյանը, ով գնել է 4 տոմս, վիճակախաղի արդյունքում շահել է գորգ. «Տոմսը գնելիս համոզված էի, որ անպայման շահելու եմ: Այս տարի նույնպես մասնակցելու եմ վիճակախաղին, ուզում եմ բնակարան շահել, որպեսզի այս գորգը կախեմ այդ բնակարանում»:

Իր շահումը տանելու էր եկել նաեւ Անդրանիկ Պողոսյանը, ով շահել է մեկ տակառ թթի օղի՝ 30 լիտր պարունակությամբ: Իսկ Արմեն Հարությունյանը, ով Ասկերանի շրջանի Այգեստան համայնքից է, գնել էր 10 տոմս, շահել՝ մեկ տակառ թթի օղի:

Վիճակախաղի շահումները կտրամադրվեն մինչեւ սույն տարվա դեկտեմբեր ամիսը:

Անի ԱՂԱՏՅԱՆ

Բազմազավակ ընտանիքը՝ բնակարան ստանալու հույսով...

Կարեն եվ Լիլիթ Հարությունյանները հինգ անչափահաս երեխաների հետ բնակվում են Մարտունի քաղաքում՝ մեկ սենյականոց կիսախարխուլ բնակարանում, որտեղ բացակայում են բոլոր կենցաղային պայմանները: Բնակարանը պատկանում է Կարենի մորաքրոջը:

Տուն մտնողին միանգամից գրավում է տան կոկիկությունն ու մաքրությունը: Երեխաներից ավագը՝ Էլինան, 12 տարեկան է, փոքրը՝ Նարեն, 10 ամսական: Ընտանիքի հայրն աշխատում է «Արցախէներգո» ՓԲԸ-ում՝ որպես էլեկտրիկ: Լիլիթը չի աշխատում:

Միեւնույն անկողնում քնում են երեք երեխաներ, մյուսում՝ հայրը, մայրը եւ ամենակրտսերը, իսկ երկու տարեկան աղջիկը հպարտությամբ ասում է. «Սա իմ անկողինն է. ես առանձին եմ քնում»:

Այսօր, ըստ ԼՂՀ համապատասխան օրենքի, բնակարան տրամադրվում է 6 եւ ավելի անչափահաս երեխաներ ունենալու դեպքում: Ստացվում է, որ 4-5 երեխա ունեցող ընտանիքները, կարեւոր չէ, թե ինչ պայմաններում են ապրում, ստիպված պիտի հարմարվեն եղած պայմաններին եւ երեխաների թիվը հասցնեն պետության կողմից սահմանված թվին:

Լիլիթը ծնունդով Աշան գյուղից է, մեծացել է բազմազավակ ընտանիքում: Միշտ ցանկացել է ինքն էլ մեծ ընտանիք ունենալ: «Քրոջը քույր պիտի լինի, եղբորը՝ եղբայր, որպեսզի իրար թիկունք լինեն,- ասում է Լիլիթը,- սակայն ո՞ր կինը կցանկանա այս պայմաններում զավակներ մեծացնել: Պետության կողմից, որպես բազմազավակ մայր, լվացքի մեքենա եմ նվեր ստացել, բայց ոչ տանը տեղ ունենք, որ օգտագործենք, ոչ էլ ջուր ունենք»:

«Իմ աշխատավարձը եւ երեխաների նպաստները մի կերպ բավարարում են ընտանիքի ծախսերը: Ավելորդ ծախսեր չենք անում: Աշխատում ենք պարտքեր չունենալ: Բայց դե գիտեք, ժամանակակից երեխաների պահանջները լրիվ տարբերվում են մեր ժամանակների երեխաների պահանջներից: Հիմա երեխաները ժամանակակից տեխնիկայի պահանջ ունեն: Ես միշտ սաստում եմ. ասում եմ, որ այս պահին դա չէ կարեւորը, մեզ այսօր բնակարանի խնդիր ունենք»,- անկեղծանում է Կարենը:

Դպրոցական երեխաները լավ են սովորում, առաջադեմ են: Երկու աղջիկները նաեւ զբաղվում են գորգագործությամբ: Էլինայի գործած գորգը մասնակցել է Ստեփանակերտում կայացած ցուցահանդես-մրցույթին: Այժմ կախված է դպրոցում:

Լիլիթը բարձրագույն կրթություն չի ստացել, բայց մտահոգված է երեխաների կրթությամբ, դրա համար հորդորում է, որ լավ սովորեն. հպարտանում է երեխաների՝ դպրոցում ունեցած առաջադիմությամբ: «Տեխնիկական առարկաներին աղջիկներս լավ են տիրապետում, սակայն՝ արդեն ինֆորմատիկա առարկա են ուսումնասիրում, եւ տանը համակարգիչ չունենալու պատճառով համեմատաբար ավելի ցածր գնահատականներ են ստանում»:

Հարությունյանները նաեւ այլ խնդիր ունեն: Որդին՝ Էմիլը, առողջական խնդիրներ ունի: Դեռ մի քանի ամսական էր, երբ աչքերի հետ կապված խնդիրներ ի հայտ եկան: Պարբերաբար տանում են ստուգումների: Ընտանիքի եկամտի մի մասը ծախսվում է այդ խնդրի լուծման համար:

Երբ այցելեցի Հարությունյաններին ու ասացի, որ ցանկանում եմ իրենց մասին գրել, ընտանիքի հայրը՝ Կարենը, ասաց. «Գրիր, բայց խնդրում եմ՝ մեզ խղճուկ չներկայացնես: Մեր ամենակարեւոր խնդիրը բնակարանի խնդիրն է, մնացածը՝ աշխատում եմ ինքս ստեղծել»...

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Հովհաննես Շիրազ-100
Հույզի ու զգացմունքի բանաստեղծը

Հովհաննես Շիրազը զգացմունքի բանաստեղծ է: Ինչ գաղափար էլ արտահայտում է նա, առաջին պլան են մղվում զգացմունքը, ներքին ապրումները, որոնցով բանաստեղծական պատկերները դառնում են ավելի հմայիչ ու սրտամոտ: Նրա պոեզիայում մի առանձնակի տեղ են գրավում մայր կնոջը նվիրված երգերը:

Մորը նվիրված ստեղծագործությունները Շիրազը առանձին գրքույկով հրատարակել է 1968 թվականին «Հուշարձան մայրիկիս» խորագրով: Շիրազի մարդ-իդեալն իր մայրն է մասնավորապես, եւ մայրերը՝ ընդհանրապես:

Մայրս փոքրիկ, մայրս խեղճ,
Մայրս մի մայր հասարակ,
Մայրս այս մայր երկրի մեջ
Արեւի դեմ մի ճրագ:

Մայրը Շիրազի երգերում բարության, սրբության, մարդկային առաքինությունների մի համաձուլվածք է: Բոլոր համեմատությունների մեջ, սակայն, մոր սերն ստանում է բանաստեղծական վեհություն ու զգացմունքի առավելություն: Նրան կարող է հավասարվել միայն հայրենիքի սերը: Բանաստեղծական հիանալի մի նմուշ է «Կշեռքը»: Մոր սերը նա համեմատում է աշխարհի շատ մեծությունների, անգամ՝ Հիմալայի հետ, եւ դարձյալ այն հաղթում է: Կշեռքին է դնում նաեւ սիրած աղջկա սերը.

Միայն հայրենիքը, հայրենիքի սերը կարող է համեմատվել մոր, ապա՝ մոր սիրո հետ:

Մայր հայրենիք ու մայր լեզու՝
Ձեզ եմ խնկում՝ մորս մեջ...

Լավ է ասված: Շիրազի պոեզիայում մոր կերպարը տեսանելի է, ամբողջական ու առինքնող: Բանաստեղծի աշխարհաճանաչումն անցնում է մոր եւ մայրերի ներաշխարհով: Մի ամբողջ աշխարհ է մայրը նրա համար: Հայ ժողովուրդն ապրել է եղեռնի դառնությունը: Այդ ծանր զգացումն ապրել է նաեւ նրա մայրը: Անցել են տարիներ, ու կաթի միջով, սերնդեսերունդ անցել է այդ ծանր վիշտը, եւ բանաստեղծը մոր միջոցով արտահայտում է կորստի ցավը, արժեւորում այդ կորուստը առողջ բանականությամբ, բանաստեղծացնում, սրբացնում նահատակների հիշատակը՝ արտահայտելով իր ցասումը աշխարհի անարդարությունների, աշխարհի քարտեզը ձեւող ու վերաձեւող հզորների դեմ: Հայոց աշխարհի կորստի մեծ վիշտը շարունակ մորմոքում է հայրենասեր բանաստեղծի զգայուն սիրտը, բայց ինչ կարող է անել, երբ աշխարհի սահմանները սրով են չափվում, եւ աշխարհի անարդարություններից հոգնած նրա խռովահույզ հոգին երբեմն աղոթք է կարդում ճակատագրի դառը խաղի առաջ.

Ա՜խ, մի՞թե պիտի անպատիժ մնան
Դժոխքի արժան մեղքերն
անսահման:

Բանաստեղծն այն կարծիքին է, որ, եթե մարդը բնության միակ անկաշկանդ շարժիչ ուժն է, ապա նրան ստեղծող, պահող, աճեցնող, կյանք տվող ամենահզոր արարածը մայր կինն է: Նա է, որ աշխարհ բերելով նորածնին՝ հաղթում է մահին: Այդ հզորությունն է, որ ամենքին տեսանելի է դարձնում Շիրազը: Բանաստեղծը լավ գիտի, որ օջախի ծուխը հավերժ պահպանողը մայրն է, որը միաժամանակ, ինչպես ինքն է ասում՝ տան ծառան է եւ արքան:

...Մայրս, մեր հացն է,
Մեր տան աստվա՜ծն է մայրս...

Շիրազի՝ մոր նկատմամբ տածած սերը՝ մորը կորցնելուց հետո վերածվում է անհուն ողբերգության: Բանաստեղծի տողերում գույները թանձրանում են, խտանում, տեղ-տեղ դառնում ռոմանտիկորեն հրաշապատում:

«Մորս մահով նոր իմացա մահն ինչ է...»: Այսպես է վերնագրել նա իր բանաստեղծություններից մեկը եւ անսահման զարմանում ու ցավում է, որ մայրը՝ Աստղիկը՝ իր սրբազան աստվածուհին, դարձել է գերեզման: Պոետը ուզում է հավատալ պատրանքների, երազների, հրաշքների, միայն թե իր երկրային հարազատին տեսնի կենդանի.

Այնքան երկար նայեցի
Մեռած մորս պատկերին,
Որ ինձ թվաց,
Թե դողաց
Իմ անունը շուրթերին...

Նման բնույթի բանաստեղծությունների մեջ, երբ գրողը զգում է, որ իրողությունից դժվար է խուսափել ու հաշտվում է մոր մահվան փաստի հետ, նրա պոեզիայի գույները, երբեմն մեղմանում են, որոշ բանաստեղծությունների մեջ՝ վերածվում համատարած ճերմակության, սակայն խոսուն ու գունեղ ճերմակության.

Ձյուն է իջնում՝ կուտակվում,
Մորս վրա վերեւից,
Ասես փետուր է թափվում
Հրեշտակի թեւերից...

Պատկերը, հիրավի, գեղեցիկ է, անմոռաց:

Պոետի մայրերգությունը, ճիշտ է, վերաբերում է իր մորը, բայց հիանալիորեն իր մեջ ընդգրկում է բոլոր մայրերի համահավաք գծերը, նրանց մեջ եղած բնորոշը, տիպականը, մաքուրն ու մարդկայինը: Դրա համար էլ՝ քանի մայրը կա, պետք է պաշտել որպես սրբություն, իսկ կյանքից հեռացած մոր գերեզմանի առաջ, ինչպես բանաստեղծն է ասում.

Անցո՛րդ, խոնարհի՛ր
Գլուխը քո սեգ,
Այստեղ հանգչում է
Մի բուռ տիեզերք...

Շիրազի՝ մորը նվիրված բանաստեղծությունները մի-մի գրական կոթողներ են, թանկ ու մնայուն կոթողներ: Ասելիքն իմ ուզում եմ ավարտել Վարպետի իմաստուն տողերով. «Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի պառնասում, հորդաբուխ ու ճշմարիտ բանաստեղծ: Նրա ամեն մի բանաստեղծություն մի գյուտ է՝ զարմանալի պատկերներով...

Խորիմաստ «Բիբլիականի», ծաղկաբույր «Խջեզարեի» եւ մյուս պոեմների կախարդ հեղինակը հետհոկտեմբերյան շրջանի ամենամեծ հայ լիրիկն է»:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

Հարգենք երեխաների արժանապատվությունը

Ընդունված է ասել, որ երեխաները մեր ապագան են: Իսկ ապագան ինքն իրեն չի ստեղծվում: Այն պահանջում է համառ, հետեւողական ջանքեր, երբեմն նույնիսկ զոհողություններ: Երեխան ծնվելու պահից դառնում է ծնողների հոգսը, զբաղմունքը, երազանքների աղբյուրը: Ամեն մի ծնող աշխատում է անել այն ամենը, ինչ կարող է՝ ըստ իր հնարավորությունների, որպեսզի երեխան մեծանա, կարողանա ապահովել իր կյանքը, լինի երջանիկ, արդար վաստակով ունենա իր հացը:

Անցնում են տարիներ, երեխան դառնում է գիտակից, ինքնուրույն քաղաքացի: Մանկության հուշերից շատ բան մոռացվում է, շատ բան էլ պահվում հոգու խորքում: Ահա մի օր էլ, ինչ որ առիթով, մեծավարի մի հայացք է ձգում իր կյանքի անցյալին, հիշում մանկությունը ու վերագնահատում անձնուրաց ծնողների հոգատարությունը, ծառայությունները, զոհողությունները: Ոմանց համար պարզվում է, որ ամեն ինչ չէ, որ մեծ ջանքերով, զոհողություններով, զրկանքներով մեծացրած զավակների կողմից ծնողների ծառայություններին, վաստակին տված գնահատականը, արժեւորումը միշտ չէ, որ համընկնում է ծնողների ներկայացրած «հաշվետվությունը» ակնկալիքներին:

Ավելի շատ տարածված վրիպումները՝ անուշադիր, ոչ հարգալից վերաբերմունքն է երեխաների ինքնասիրության, արժանապատվության, հոգեկան ապրումների նկատմամբ: Նրանց բազմերանգ, հարուստ ու հետաքրքիր հոգեկան աշխարհը, նուրբ ապրումները, թեւավոր երազանքները շատ ծնողների տեսադաշտից դուրս են մնում՝ առօրյա կենցաղային գործողության պայմաններում: Իսկ տասնամյակներ հետո ավելի շատ վերհիշվում են հատկապես հոգեկան ապրումների, ցնցումների պատճառ հանդիսացած անախորժ իրավիճակները: Պարզ է, որ սխալ հիմքերի վրա դրված դաստիարակության հետեւանքները հետագայում դժվար է լինում ուղղել: Դաստիարակչական ջիղ, փորձ, գիտելիքներ, բնատուր նրբանկատություն չունեցող մայրերի, եւ ոչ միայն մայրերի, երեխաների հետ վարվեցողությունում պակասում են հարգանքը, խորաթափանցությունը, համբերատարությունը: Երեխաների ամեն մի գործողություն ուղղված է լինում ինքնուրույնություն ձեռք բերելու, շրջապատը ճանաչելու, ընկալելու նպատակին: Ահա այստեղ է, որ համբերատարությամբ շարունակ պետք է նրան օգնել նպատակին հասնելու համար եւ ոչ թե անընդհատ կշտամբել՝ «ձեռք մի տուր», «մի արա», «հեռացիր», «գործ չունես», եւ այլն, եւ այլն արգելք արտահայտող բառեր կրկնելով: Որոշ մայրերի վերաբերմունքը երեխայի նկատմամբ շարունակ ուղեկցվում է արգելք արտահայտող բառերով, ինչպես նաեւ՝ երբեմն պատժելու կոպիտ սպառնալիքներով: Նման վերաբերմունքը երեխաներին վիրավորում է, հոգեկան ցավ պատճառում, միաժամանակ՝ նրանց մեջ կասեցնում, թուլացնում նախաձեռնելու, ինքնուրույնություն ձեռք բերելու ձգտումը:

Մինչդեռ, ճիշտ կլինի համբերությամբ օգնել երեխային որեւէ բան ստեղծել, հասկանալ, մտադրությունն իրականացնել եւ՝ դեռ մի երկու ջերմ, խրախուսական բառեր էլ ասել նրա ընդունակությունների մասին, ոգեւորել նրան, որ ինքնուրույն լինի, վստահի իր ուժերին: Մեր կենցաղում, անկեղծ ասած, հաճախ բացակայում է երեխաների հետ կիրթ վարվեցողությունը, հարգանքը, թեեւ սննդի եւ հագուստի նկատմամբ առավել հոգացություն է ցուցաբերվում:

Մեր ընտանիքներում, ցավոք, ընդունված չէ երեխաների հետ խոսելիս, հարկ եղած դեպքում ասել՝ «ներիր», «կարելի՞ է», «խնդրում եմ», «շնորհակալություն», «բարի լույս», «բարի գիշեր» եւ այլն: Սովորաբար, տարիքավորները իրար հետ խոսելիս աշխատում են շատ թե քիչ պահպանել քաղաքավարության նորմերը՝ չվիրավորել, զգույշ լինել, հարգել միմյանց արժանապատվությունը: Լավ կլիներ, որ նրանք երեխաների հետ էլ իրենց վարվեցողությունում կիրառեին այդ ակզբունքը: Երեխաներից հաճախ պահանջում են հարգել, լսել մեծերին: Շրջապատի նկատմամբ հարգանք կարելի է արմատավորել, սովորեցնել՝ երեխաներին հարգելու շնորհիվ եւ ոչ պարտադրելու:

Որոշ դեպքերում երեխայի նկատմամբ կոպիտ, վիրավորական վերաբերմունքի հետեւանքով նկատելի է լինում նրա դեմքի գունատվելու կամ խիստ կարմրելու վիճակ: Այդ պահին նրա արյան բաղադրության մեջ էլ է փոփոխություն տեղի ունենում՝ ի վնաս երեխայի առողջության: Դպրոցներում հատուկ ուշադրություն պիտի դարձնեն այն երեխաների նկատմամբ, որոնց ընտանիքներում բացակայում է համերաշխությունն ու խաղաղությունը...

Ծնողի կողմից երեխայի հետ ոչ կոռեկտ վերաբերմունքի անհիմն կոպտության կրկնությունները նրանց զգացմունքներում, անշուշտ, փոփոխություններ են առաջացնում: Ծնողների հանդեպ նրանց սիրո, հարգանքի մի զգալի մասը ջնջվում է, գուցեեւ ընդմիշտ, թեեւ այդ մասին երբեւէ կարող են եւ չասել, բայց տարիներ հետո անպայման կդրսեւորվի, կզգացվի: Երեխաները շատ զգայուն են լինում: Պատահական չէ, որ երբ մի տարիքավոր մարդ շուտ նեղանում է, ասում են՝ «երեխա հո չե՞ս»: Նրանց նուրբ սիրտը շատ արագ է արձագանքում արտաքին աշխարհից ստացած հույզերին: Դժվարին ժամանակներ ենք ապրում. նյութական անվերջ հոգսեր, զբաղվածություն, կենցաղային, առողջական զանազան խնդիրներ, եւ այդ ամենի հետ միասին՝ երեխաների նկատմամբ բազմակողմանի հոգատարությունը շատերի համար կարծես անհնար է դարձել: Մինչդեռ երեխաները հոգեւոր սննդի մեծ կարիք ունեն: Կարիք ունեն խրախուսանքների, սրտամոտության, փաղաքշանքների: Ոչ կիրթ ձեւով ստացած հուսահատեցնող նկատողությունները երեխային դարձնում են ջղագրգիռ, վիրավորում նրա ինքնասիրությունն ու արժանապատվությունը: Ոչ հարգալից վերաբերմունքից դժգոհ՝ նրանք կարող են ցուցադրաբար չարություններ անել, առավել եւս՝ եթե վիրավորանքը հասցվում է կողմնակի մարդկանց ներկայությամբ: Դա արդեն ծանր է ազդում երեխայի հոգեկանի վրա, եւ չպետք է զարմանալ, եթե նա ըմբոստանա, ոչնչի առաջ կանգ չառնի ու գործը հասցնի ծեծվելուն: Երբեք երեխան հենց այնպես, ինքնանպատակ չարություն չի կարող անել: Պետք է համբերությամբ, զսպվածությամբ պարզել, հասկանալ պատճառը: Անթույլատրելի է երեխային ծաղրելը, զանազան բացասական ածականներով որակելը, ինչ-որ բացասական համբավ ունեցողին նմանեցնելը՝ առանց լրջորեն մտածելու, զգալու, թե անպաշտպան երեխայի ինքնասիրությանն ինչպիսի ցավալի հարվածներ են դրանք:

Պատահում է՝ երեխան պարապելու, դասը սովորելու ժամանակ միեւնույն սխալը մի քանի անգամ կրկնում է: Կողքից մեկը, իր ասածներին որեւէ նշանակություն չտալով, իրեն թույլ է տալիս, որպես «օգնություն», նկատողություն անել՝ «չե՞ս տեսնում», «կո՞ւյր ես», «բո՞ւթ ես» կոպիտ արտահայտությունները գործածելով, որոնք ոչ միայն չեն կարող նպաստել ուշադրության կենտրոնացմանը, այլ, ընդհակառակը, երեխայի միտքը շեղում են բոլորովին այլ ուղղությամբ: Այսինքն՝ երեխան կարող է մտածել իր ոչ լիարժեքության մասին ու նույնիսկ դրանով արդարացնել իր անկարողությունը: Մինչդեռ, օգնելու համար ճիշտ կլինի օգտագործել շատ հասարակ ու հաճելի արտահայտություններ՝ «ուշադիր կարդա», «լավ նայիր», «դու խելոք ես», «դու ընդունակ ես», «դու կարող ես» եւ այլ՝ դրական հույզեր առաջացնող բազմաթիվ բառերով: Լավ կլիներ, որ՝ թե այն ծնողները, թե այն ուսուցիչները, ովքեր, թեկուզ ոչ միշտ, բացասական հույզեր առաջացնող արտահայտություններ են օգտագործում, մեկընդմիշտ իրենց բառապաշարից հանեն դրանք:

Չարաչար սխալվում են այն ծնողները կամ ուսուցիչները, ովքեր, իբրեւ դաստիարակչական նպատակներով, երբեմն կոպտություններ են գործադրում՝ երեխայի գիտակցությանն ու խղճին, զգացմունքներին դիմելու փոխարեն:

Անարդարացի վերաբերմունքի ու կոպտությունների դեպքում ո՞վ է երեխայից ներողություն խնդրում: Դա տեղի չի ունենում, ցավոք՝ մեր կենցաղում ընդունված չէ:

Բազում հոգսերի կենցաղային գորշության պայմաններում էլ անհրաժեշտ է, որպեսզի առավել հոգատար լինենք, հարգանքով վերաբերվեք երեխաների արժանապատվությանն ու տարիքային առանձնահատկություններին, ու այդպիսով նրանց մեջ արմատավորենք հարգանքի կայուն զգացում թե՛ հարազատների, թե՛ շրջապատի նկատմամբ, այլ կերպ՝ հասարակության բարոյական կերպարը թերի կլինի:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: aparaj@mail.ru
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 850: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ալեսյա Բեջանյան